ՀՏԴ 338.48

Կրոնական զբոսաշրջության զարգացման հեռանկարները ՀՀ-ում

Մելրան Սուվարյան
Մարիամ Տաշյան

DOI: https://doi.org/10.58726/27382915-2024.2-259

Հանգուցային բառեր. *զբոսաշրջություն, ուխտագնացություն, քրիստոնեություն, քրիստոնեական երկիր, վանք, եկեղեցի*

Խնդրի դրվածքը: Մեր խնդիրն է ներկայացնել կրոնական զբոսաշրջության զարգացման հեռանկարները ՀՀ-ում, որի համար անհրաժեշտ է վերհանել ու բացահայտել կրոնական զբոսաշրջության հիմնական խնդիրները ՀՀ-ում և կատարել առաջարկություններ վերջիններիս լուծման համար:

Ներածություն: Զբոսաշրջիկների տեղափոխությունը մշտական բնակության վայրից ժամանակավոր բնակության վայր պաշտամունքային և կրոնական նպատակներով, նվազագույնը մեկ օր գիշերակացով անվանվում է կրոնական զբոսաշրջություն: Կրոնական զբոսաշրջությունը ունի երկու հիմնական տեսակ [5]՝ ուխտագնացություն և էքսկուրսային-ճանաչողական բնույթի կրոնական զբոսաշրջություն:

Ընդհանուր առմամբ, **էքսկուրսային ճանաչողական բնույթի կրոնական զբոսաշրջությունը** տարբերվում է ուխտագնացությունից ճանապարհորդության նպատակով և հետևյալ հիմնական հատկանիշներով.

- այցելության օբյեկտները,
- ծառայության որակական չափանիշները,
- էքսկուրսային ծառայության առկայությունը,
- ճանապարհորդության ժամկետները,
- հաճախորդների տարիքային և սոցիալական կատեգորիաների հաշվառումը,
- ճանապարհորդություն իրականացնողների թիվը,
- ճանապարհորդության առանձնահատկությունները (հաշվի է առնվում կրոնական պատկանելությունը, ուխտագնացության առանձնահատկությունները):

Հայաստանում կրոնական զբոսաշրջության զարգացման վերոնշյալ երկու տեսակների համար կան զգալի ներուժ և նախադրյալներ, հարուստ պատմամշակութային ժառանգություն, այդ թվում՝ հուշարձաններ, որոնցից կարող ենք նշել Գառնու հեթանոսական տաճարը, Գեղարդի վանքը, Խոր Վիրապը, Զվարթնոցի տաճարը, Էջմիածնի Մայր տաճար և եկեղեցիներ (սբ. Հռիփսիմե, սբ. Գայանե, սբ. Շողակաթ) և Զվարթնոցի տաճարի հնավայրը, Հաղպատը, Սանահինը և այլն: Հուշարձաններից շատերը ներառված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում, որը նույնպես խթան է զբոսաշրջության այս տեսակի զարգացման համար:

Կրոնական զբոսաշրջության համաշխարհային շուկան զբոսաշրջության ամենամեծ սեգմենտներից մեկն է: 2018 թվականին 1,4 միլիարդ միջազգային զբո-

սաշրջիկների մոտ մեկ երրորդը ճանապարհորդել է կրոնական նպատակներով: Սա նշանակում է, որ մոտավորապես 450 միլիոն միջազգային ուղևորություններ են կատարվել կրոնական նպատակներով: Բացի այդ՝ ըստ «Global Religious Tourism Industry Research Report 2023, Competitive Landscape, Market Size, Regional Status and Prospect»-ի հետազոտության արդյունքների, 2022 թ.-ին կրոնական զբոսաշրջությունից ստացված եկամուտները մոտ 1330 մլն դոլար են կազմում, 2023 թ.-ին այդ թիվը կազմել է 1500 մլն դոլար, իսկ 2028 թ.-ին կկազմեն 1900 մլն դոլար:

Շատ երկրների համար կրոնական զբոսաշրջությունը իր պատմական և կրոնական ժառանգության շնորհիվ կազմում է զբոսաշրջության շուկայի զգալի մասը: Սաուդյան Արաբիան, օրինակ, 2019 թվականին ընդունել է 13 միլիոն կրոնական զբոսաշրջիկների, և ակնկալվում է, որ մինչև 2030 թվականը այս թիվը կավելանա ավելի քան կրկնակի՝ հասնելով 30 միլիոնի: Բրազիլիայում կրոնական զբոսաշրջության շուկան երկրի ամենամեծ զբոսաշրջության սեգմենտներից մեկն է, որը գնահատվում է 14 միլիարդ եվրո՝ 20 միլիոն ուղևորությունների արդյունքում [1]:

Չնայած որ COVID-19-ը մեծ ազդեցությունն է ունեցել նշված թվերի վրա, այնուամենայնիվ կրոնական զբոսաշրջությունը շարունակում է մնալ տարբեր երկրների զբոսաշրջության զարգացման հիմնական ուղղությունը: Այդ երկրներից անմասն չէ նաև ՀՀ-ն, որն ունի կրոնական զբոսաշրջության զարգացման մեծ հեռանկարներ, որի բացահայտմանն էլ ուղղված է մեր ուսումնասիրությունը:

Բուն հետազոտություն: Ըստ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական կոմիտեի՝ Հայաստանը՝ որպես զբոսաշրջային երկիր, ունի կրոնական և ուխտագնացության զբոսաշրջության զարգացման մեծ ներուժ՝ ընդգրկելով շուրջ 1051 քրիստոնեական հուշարձաններ: 2013 թվականին զբոսաշրջային ընկերությունների կողմից ամենաշատ վաճառված զբոսաշրջային արդյունքների հանրագումարում կրոնական զբոսաշրջության բաժինը Հայաստանում կազմել է 5.2 %, Եվրոպայում՝ 2.8 %, ԱՄՆ-ում՝ ընդամենը 1 %: Ստացվում է՝ համեմատելով Եվրոպայի հետ՝ ՀՀ-ում կրոնական զբոսաշրջությունից ստացված եկամուտները գրեթե 2 անգամ ավելի են [3]: Համաձայն ՄԱԿ ԶՀԿ կանխատեսումների՝ XXI դարի սկզբին զբոսաշրջության առավել հեռանկարային ձևերից առաջին տեղում է լինելու կրոնական, այդ թվում՝ ուխտագնացության զբոսաշրջությունը: Ասվածը ակտուալ է նաև մեր երկրի համար, քանի որ, ինչպես նշվեց, ունենք 1000-ից ավելի քրիստոնեական հուշարձաններ, որոնք նաև ներառված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային ժառանգության ցանկում:

ՀՀ-ում կրոնական զբոսաշրջության պատկերը առաջին հայացքից դրական է, սակայն ոլորտում ունենք մի շարք **հիմնախնդիրներ**, որոնք ենթակա են հրատապ լուծման: Վերջիններս կարող ենք բաժանել 2 խմբի՝ ներքին խնդիրներ, որոնք անմիջականորեն կապված են ՀՀ զբոսաշրջության ոլորտի հետ, և արտաքին, որոնք ՀՀ զբոսաշրջության ոլորտից դուրս են. դրանք ունեն անուղղակի ազդեցություն:

Արտաքին խնդիրների մեջ պետք է անդրադառնալ զբոսաշրջիկներին ներ-

կայացվող *էքսկուրսիոն նյութին*, որը շատ հաճախ ոչ ճշգրիտ է: ՀՀ-ն ներգնա զբոսաշրջիկների համար հիմնականում հանդիսանում է տրանզիտային երկիր, որտեղ մնում են մի քանի օր, և ժամանած զբոսաշրջիկներից շատերը *սխալ ինֆորմացիա* են ստանում հարևան երկրներում և գալով Հայաստան՝ տարակարծությունների մեջ են հայտնվում:

Ներքին խնդիրները ներկայացնենք զբոսաշրջության համակարգի բաղադրիչներով:

Զբոսաշրջիկ: Ներքին խնդիրներից առաջնային է կրոնական զբոսաշրջության *թույլ մոնիթորինգը*: ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ Սիսիան Պողոսյանի փաստմամբ՝ 2021 թվականին Հայաստանում հյուրընկալվել են մոտ 850 000 զբոսաշրջիկներ [2]: ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից ներկայացված թվերը կրոնական զբոսաշրջության համար, ըստ մեր հետազոտության, չեն համապատասխանում իրականությունը, քանի որ ըստ «Արմստատի մշտադիտարկման դաշտում ընդգրկված զբոսաշրջային օպերատորների/զբոսաշրջային գործակալների կողմից ներկայացված տեղեկատվության՝ 2021 թ. կրոնական նպատակով ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակը կազմել է 250 մարդ»: Սակայն փաստացի հայկական եկեղեցիներ ու վանքեր այցելում են հազարավոր զբոսաշրջիկներ աշխարհի տարբեր երկրներից, և ՀՀ-ում զբոսաշրջային ընկերությունների առաջարկած յուրաքանչյուր 2-րդ փաթեթ իր մեջ ներառում է որևէ կրոնական ռեսուրս:

Զբոսաշրջային ենթակառուցվածք: Խոսելով ենթակառուցվածքների մասին՝ անհրաժեշտ է նշել այն օգնող, օժանդակող միջոցները, որոնք անհրաժեշտ են կրոնական զբոսաշրջության կազմակերպման և զարգացման համար: Դրանցից են *տրանսպորտային ենթակառուցվածքները*: Կազմավորված ավտոճանապարհային ցանցի ընդհանուր օգտագործվող հատվածի երկարությունը կազմում է 7637 կմ (4745 մղոն), որից 96,7 %-ը ասֆալտապատ է: Սա խթան է զբոսաշրջության զարգացման համար մի երկրում, որտեղ երկաթուղային տրանսպորտը թույլ է զարգացած իր լեռնային դիրքի պատճառով: Ինչպես ցույց է տալիս օրինաչափությունը, ՀՀ-ում եկեղեցիների ու վանքերի գերակշռող մասը գտնվում է բարձրլեռնային դիրքում, հետևաբար նշված վայրերում կիրառելի չեն ոչ ավտոմոբիլային, ոչ էլ երկաթուղային տրանսպորտները, այլ ոտքով բարձրանալը, ինչպես ուխտագնացության ժամանակ: Այս տեսանկյունից գրեթե խնդիրներ չեն առաջանում: Սրան ի հակառակ, ունենք տարածքներ, որտեղ բնական աղետների պատճառով անհարմարություններ են առաջանում: Օրինակ Գառնու հեթանոսական տաճարը ՀՀ կրոնական զբոսաշրջության առաջնային ուղղություններից մեկն է, սակայն ճանապարհին անցնում է Ողջաբերդի տարածքով, որտեղ սողանքների պատճառով կան սողանքավտանգ տարածքներ:

Այստեղ պետք է նշել, որ ոլորտում կա խնդիր՝ «երրորդային խմբի» զբոսաշրջիկների գործունեությունը կազմակերպելու հետ կապված: Եթե Երևանում գտնվող եկեղեցիներն ունեն թեքահարթակներ, կույրերի համար նախատեսված ցուցանակներ, ապա մարզային շատ դեստինացիաներում դրանք բացակայում են:

Զբոսաշրջային ռեսուրս: Ոլորտի համար ռեսուրս հանդիսանում են ՀՀ եկե-

ղեցիները, վանքերն ու վանական համալիրները, և այն զբոսաշրջային ռեսուրսները, որոնք ունեն կրոնական նկրտումներ: Մեր երկրում 2020 թվականի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման համաձայն կան 24 221 միավոր հուշարձաններ [4], որից շուրջ 4000 եկեղեցիներ ու վանական համալիրներ: ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում կա 7 հայկական օբյեկտ, որից 3-ը հայկական եկեղեցիներն են՝ Գեղարդի վանքը, Զվարթնոցի տաճարը, Հաղպատի և Սանահինի վանական համալիրները [6]: Վերջինս նույնպես հզոր նախադրյալ է զբոսաշրջության զարգացման համար: Նշենք նաև, որ կան կրոնական դեստինացիաներ, որոնք համարվում են թեկնածուներ վերոնշյալ ցանկում, դրանք են.

- Երերույքի տաճարի ավերակները,
- Տաթևի վանական համալիրը,
- Նորավանքի վանական համալիրը:

Ներքին խնդիր է մշակութային ժառանգության էլեմենտները *պահպանելը*: Եկեղեցիների և վանքերի պատերը ծածկված են ինչ-որ գրություններով, եկեղեցիների բակերում կան «երազանքի ծառեր», որոնք լցված են տարատեսակ իրերով: Չնայած որ սա որոշակի առումներով ավանդույթ է, այնուամենայնիվ զբոսաշրջիկների տպավորության վրա անդրադառնում է բացասական առումով: Կան եկեղեցիներ, որոնց բակը վերածված է «առևտրի կենտրոնների», կամ որոնցից քիչ այն կողմ հնչում է ոչ որակյալ երաժշտություն, ինչը նույնպես խոչընդոտ է: Հենց այս խնդրի պատճառով է, որ Նորավանքը չի ներառվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային ժառանգության ցանկում:

Խնդիր է այն, որ հայկական եկեղեցիներից որոշները *չունեն քահանա*, որն իր հերթին մի շարք խնդիրներ է առաջացնում, քանի որ շատ հաճախ գյուղացիներից ինչ-որ մեկը հագնում է վեղար և իրեն կարգելով քահանա՝ ներկայացնում է եկեղեցու պատմությունը, իրականացնում է ծեսեր, որը, բնականաբար, անթույլատրելի է: Բացի այդ, չունենալով քահանա՝ եկեղեցին զրկվում է համագործակցությունից և զարգացման հնարավորությունից:

Զբոսաշրջային ինդուստրիա: Այս բաղադրիչն իր մեջ ամփոփում է 4 էլեմենտ՝ զբոսաշրջային օպերատորներ, գործակալներ, հասարակական կազմակերպություններ և պետական կառավարման համակարգը: Եթե ուսումնասիրենք զբոսաշրջային գործակալների և օպերատորների կողմից ստեղծվող ու վաճառվող զբոսաշրջային փաթեթները, կտեսնենք, որ գրեթե յուրաքանչյուր փաթեթի մեջ կան կրոնական էլեմենտներ: Յուրաքանչյուր փաթեթ իր մեջ ներառում է գոնե մեկ եկեղեցի, վանք կամ վանական համալիր: Զբոսաշրջային գործակալությունների մեծ մասը կազմակերպում է կրոնական զբոսաշրջություն ոչ թե կրոնի, այլ մշակույթի տեսանկյունից: Այստեղ ունենք խնդիր զբոսաշրջիկին ներկայացնելու ոչ թե քարերի պատմությունը, այլ բովանդակությունը: Ոչ թե եկեղեցու պատմության զուտ ժամանակագրական աղյուսակը, այլ բուն էությունն ու բովանդակությունը ավելի մեծ զբոսաշրջային գրավչություն ունի: Ինչ վերաբերում է հասարակական կազմակերպություններին, դրանք պարբերաբար իրականացնում են միջոցառումներ՝ խթանելու համար կրոնական զբոսաշրջությունը, հատկապես

զբոսաշրջության համաշխարհային օրը՝ սեպտեմբերի 27-ին, կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ և փառատոներ՝ նվիրված զբոսաշրջությանը և զբոսաշրջային բիզնեսին:

2016 թ.-ին ՀՀ այցելեց Հռոմի պապը, որը կրոնական զբոսաշրջության համար դրական ազդեցություն ունեցավ, քանի որ նա հայտարարեց, որ գալիս է ուխտագնացության երկիր: Դեռևս 2017 թ.-ից Հայաստանում մշակվել է «կրոնական զբոսաշրջության» զարգացման ծրագիր ՀՀ Զբոսաշրջության պետական կոմիտեի կողմից: 2017 թ.-ի հոկտեմբերի 4-ին Երևանում կայացած հայ-լեհական գործարար համաժողովի շրջանակներում քննարկվել է կրոնական զբոսաշրջության զարգացման հարցը: Սրանք նույնպես քայլեր են՝ ուղղված ՀՀ-ում զբոսաշրջության այս տեսակի զարգացմանը, որը 2023 թ.-ի տվյալներով իր դրական արդյունքն ունեցել է՝ հաշվի առնելով զբոսաշրջիկների ռեկորդային՝ 2.3 մլն թիվը, որը 2022 թ.-ի համեմատ աճել է շուրջ 40 %-ով:

Ստացվում է, որ կրոնական զբոսաշրջության ոլորտում առկա առերևույթ խնդիրները զբոսաշրջիկների մոտ վատ տպավորությունների պատճառ են դառնում, որն էլ հանգեցնում է նրանց քանակի նվազեցմանը: Անհրաժեշտ է էքսկուրսիայի ընթացքում զբոսաշրջիկին ներկայացնել զբոսաշրջային կրոնական ռեսուրսների պատմությունը և բովանդակությունը, ինչպես ասված է Մայր աթոռի թանգարանների և արխիվների տնօրեն տեր Ասողիկ քահանա Կարապետյանի խոսքում. «*Զբոսաշրջիկի համար միայն վանքերի քարը պետք է ցույց չտրվի, այլ բովանդակությունը*»: Խնդիրների լուծման համար անհրաժեշտ է կանխարգելել հնարավոր ռիսկերը՝ կապված դեզինֆորմացիայի հետ, որը հնարավոր է այն պարագայում, երբ ՀՀ-ում զբոսավարը ունենա անհրաժեշտ գիտելիքներ, ոչ միայն տվյալ պատմամշակութային հուշարձանի, այլ նաև հայոց եկեղեցու պատմության և հայոց պատմության վերաբերյալ, որն էլ անհրաժեշտ է իրականացնել լիցենզավորված գիդերի միջոցով, որի նախագիծը թերևս ՀՀ զբոսաշրջության կոմիտեն առաջ է քաշել, բայց ընդունված չէ:

Անհրաժեշտ է բարձրացնել պետական վերահսկողությունը՝ պարբերաբար իրականացնելով մոնիթորինգներ և իրազեկման աշխատանքներ: Համայնքների բնակիչներն իրենց հերթին պետք է ինֆորմացված լինեն «արգելված ու չարգելված» քայլերի մասին, և հորդորեն զբոսաշրջիկներին հետևելու դրանց: Խոսքը վերաբերում է նաև տարբեր սովորույթների, որոնք չի ընդունում հայկական եկեղեցին, սակայն արմատացած է հայ ժողովրդի մոտ դեռևս հեթանոսական ժամանակաշրջանից:

ՀՀ կառավորությունը, հաշվի առնելով քրիստոնեությունն առաջինը պետական կրոն ընդունած երկրի փաստը, կարող է կրոնական զբոսաշրջությունը դարձնել գերակա ուղղություն՝ համապատասխան կայուն զարգացման չափանիշներին, որի շնորհիվ էլ ավելի կմեծացնենք զբոսաշրջիկների թիվը մեր երկրում, որն իր հերթին կանդրադառնա երկրի իմիջի բարձրացման և միջազգային զբոսաշրջային շուկայում իր տեղի ամրապնդման վրա:

Լուծելով այս խնդիրները՝ կկարողանանք հասնել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի

«Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր» ռազմավարության [3] ռազմավարական նպատակներին:

Եզրակացություն: ՀՀ-ն, ըստ աշխարհագրական դիրքի, հանդիսանում է տարածաշրջանում միակ պետությունը, որը, դարեր շարունակ լինելով շրջապատված մահմեդական երկրներով, կարողացել է պահպանել իր քրիստոնեական դիրքերը՝ հավատը, ծեսերը (բնակչության շուրջ 90 % -ը քրիստոնյա է): Կրոնական զբոսաշրջությունը զբոսաշրջային ինդուստրիայի ներայացուցիչների ուշադրության կենտրոնում է եղել տարիներ շարունակ, դրա համաչափ և կայուն զարգացման համար դետալները քննարկվում են նաև Հայ Առաքելական եկեղեցու հետ: Սա ևս փաստում է այն մասին, որ ՀՀ-ում հեռանկարային է կրոնական զբոսաշրջությունը:

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ հանգում ենք այն բանին, որ.

- գլոբալ խնդիրները կայուն զարգացման միջոցով լուծելու համար լավագույն միջոցներից մեկն է կրոնական զբոսաշրջությունը,
- ոլորտում ունենք հիմնախնդիրներ՝ կապված ստանդարտացման և մոնիթորինգի հետ, անհրաժեշտ է իրականացնել քայլեր վերահսկողությունը բարձրացնելու համար,
- դարեր շարունակ շրջապատված լինելով մահմեդական երկրներով՝ ՀՀ-ն կարողացել է պահպանել իր քրիստոնեական դիրքերը՝ հավատը, ծեսերն ու մշակույթը, որը նույնպես ապացույց է հեռանկարայնության,
- ՀՀ-ն կարող է կրոնական զբոսաշրջությունը դարձնել գերակա ուղղություն՝ համապատասխան կայուն զարգացման չափանիշներին, որի շնորհիվ էլ ավելի կմեծանա զբոսաշրջիկների թիվը մեր երկրում,
- «երրորդային խմբի» զբոսաշրջիկների գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ է կառուցել թեքահարթակներ, կույրերի համար նախատեսված ցուցանակներ և կիրառել այլ գործիքներ, զբոսաշրջությունը այս խմբի անձանց հասանելի դարձնելու համար:

Վերոնշյալից պարզ է դառնում, որ մեր երկիրն ունի կրոնական զբոսաշրջության զարգացման բոլոր նախադրյալները: Հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ-ն քրիստոնեությունը պետական կրոն ընդունած առաջին պետությունն է, կարող ենք եզրակացնել, որ զբոսաշրջային հոսքերը ՀՀ-ում կայուն են լինելու նաև հետագա տարիներին, քանի որ այն մշտապես լինելու է քրիստոնյա զբոսաշրջիկների հետաքրքրության կենտրոնում:

Այսօր աշխարհում կա միտում. գլոբալ խնդիրները լուծել կայուն զարգացման միջոցով: Զբոսաշրջության այս տեսակը լավագույն միջոցներից մեկն է կայուն զարգացման հասնելու համար, քանի որ սրա միջոցով մենք կարող ենք.

- նպաստել Հայաստանի կայուն և համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, ազգային եկամտի ավելացմանը,
- Հայաստանի և հայ ժողովրդի համաշխարհային ճանաչելիության բարձրացմանը,
- պատմամշակութային ժառանգության պահպանությանը, զարգացմանը և պատշաճ ներկայացմանն ու խթանմանը,

- բնակչության կենսամակարդակի բարձրացմանը,
- մշակութային բազմազանության և միջմշակութային երկխոսության պահպանմանն ու զարգացմանը,
- Հայաստան-սփյուռք կապերի ու հայապահպանության ամրապնդմանն ու զարգացմանը,
- համամարդկային արժեքների պահպանությանը, զարգացմանը, խթանմանը, միջազգային համերաշխության և խաղաղության ամրապնդմանը և այդ գործընթացներում Հայաստանի դերի բարձրացմանը:

Այսպիսով, կրոնական զբոսաշրջության միջոցով մենք կարողանում ենք իրականացնել Հաազայի հռչակագրի, Ակապուլկոյի համաձայնագրի, Զբոսաշրջության խարտիայի և զբոսաշրջիկի կոդեքսի հիմնադրույթները:

DOI: https://doi.org/10.58726/27382915-2024.2-259

Գրականություն

1. URL:https://www.cbi.eu/market-information/tourism/religious-tourism/market-potential (դիտվել է 23.01.2024):
2. URL: https://factor.am/472174.html (դիտվել է 23.01.2024):
3. URL: https://www.e-draft.am/projects/229/about (դիտվել է 23.01.2024):
4. URL: https://armstat.am/file/article/sv_03_21a_550.pdf (դիտվել է 23.01. 2024):
5. Христов Т. Религиозный туризм: Учеб. пособие для студ. высш. учеб. заведений / 2-е изд., испр. Издательский центр «Академия», Москва, 2005, 288 с.
6. URL: https://www.mfa.am/hy/international-organisations/17 (դիտվել է 23. 01. 2024):

Перспективы развития религиозного туризма в Республики Армении

Мариам Ташян
Сейран Суварян

Резюме

Ключевые слова: *туризм, паломничество, христианство, христианская страна, монастырь, церковь*

Цель работы - выделить и обозначить основные проблемы, преимущества и недостатки религиозного туризма для РА, после чего наша задача представить перспективы развития религиозного туризма в РА.

В работе использовались методы анализа, сравнения, описания, наблюдения и опросов в соответствии с вышеуказанной методикой.

Подводя итоги исследования, делаем вывод, что:

- Религиозный туризм – один из лучших способов решения глобальных проблем посредством устойчивого развития.
- Необходимо принять меры по усилению контроля, так как есть проблемы в сфере стандартизации и мониторинга.
- РА сумела сохранить свои христианские позиции, веру, обряды и культуру, находясь

в окружении мусульманских стран на протяжении столетий, что также является доказательством перспективности.

- РА может сделать религиозный туризм приоритетным направлением в соответствии со стандартами устойчивого развития, благодаря чему количество туристов в нашей стране еще больше увеличится.
- Для организации деятельности туристов «третьей группы» необходимо построить пандусы, указатели для слепых и использовать другие инструменты, чтобы сделать туризм доступным для этой группы людей.
- РА, являясь первым государством, принявшим христианство в качестве государственной религии, имеет все возможные предпосылки для устойчивого развития туристических потоков в РА.

Prospects of the Development of Religious Tourism in Armenia

Mariam Tashyan
Seyran Suvaryan

Summary

Key words: *tourism, pilgrimage, Christianity, Christian country, monastery, church*

In the work, the methods of analysis, comparison, description, observation, and surveys were used in accordance with the above-mentioned methodology.

Summarizing the results of the research, we come to the following conclusions:

- Religious tourism is one of the best ways to solve global problems through sustainable development.
- It is necessary to take measures to strengthen control, as there are problems in the area of standardization and monitoring.
- The Republic of Armenia has managed to preserve its Christian positions, faith, rituals and culture, even being surrounded by Muslim countries for centuries, which is also proof of its prospects.
- RA can make religious tourism a priority direction in accordance with sustainable development standards, thanks to which the number of tourists in our country will increase even more.
- In order to organize the activities of the "third group" tourists, it is necessary to build ramps, signs for the blind and use other tools to make tourism accessible to this group of people.
- RA, being the first country to adopt Christianity as a state religion, has all possible prerequisites for the sustainable development of religious tourist flows in RA.

Ներկայացվել է 30.01.2024 թ.
Գրախոսվել է 22.02.2024 թ.
Ընդունվել է տպագրության 28.11.2024 թ.